ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/101

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից 03.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Դավիթշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դավիթշին» ՍՊԸ-ն 03.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների աշխատանքի կատարման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 23.09.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Դավիթշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

«Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գինը կազմում է՝ 10.776.000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել՝ «Դավիթշին» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Պորֆարոեկտ» ՍՊԸ-ն, որի գինը կազմում է 11 280 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 6.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը, «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Նույն արձանագրության 1.5 կետի համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Դավիթշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 333.195 ՀՀ դրամի չափով, և ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով և հրավերի 7.15 կետով, որոշել է մերժել «Դավիթշին» ՍՊԸ-ի հայտը և հրավերով սահմանված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը համաձայն չէ վերը նշված որոշման և Կոմիտեի եզրակացության հետ քանի որ, ս.թ սեպտեմբերի 21-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում ոչ աշխատանքային օրեր էին:

Ընկերությունը քաջատեղյակ լինելով վերոնշյալի մասին, շաբաթվա վերջին աշխատանքային օրը՝ 20.09.2018թ., Ընկերությանը սպասարկող բանկի՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղում թիվ 6 և թիվ 7 վճարման հանձնարարականների միջոցով թիվ 90005001186 և թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարներին կատարել է համապատասխանաբար 7000 ՀՀ դրամի և 500.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր առմամբ 507.000 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը համոզված լինելով, որ իր կողմից կատարված վճարումներով ամբողջությամբ մարել է հարկային պարտավորությունները, 23.09.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ «Դավիթշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 333.194 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ:

Վերոհիշյալ խնդիրը պարզելու նպատակով, Ընկերությունը դիմել է Կոմիտե և խնդրել է տալ տեղեկատվություն 23.09.2018թ. (հայտը ներկայացնելու օրվա) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան Ընկերության հարցմանը, Կոմիտեի կողմից 02.10.2018թ. տրված թիվ 1709 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 23.09.2018թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 333.194 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ, ինչպես նաև 340.751 ՀՀ դրամի դեբետային մնացորդ և 6.691 ՀՀ դրամի սահմանված չափից ավել վճարված գումար:

Բացի այդ Ընկերությունը ցանկանում է նաև ներկայացնել Կոմիտեի կողմից 01.10.2018թ. տրված տեղեկանքի պատճենը, որի համաձայն՝ Ընկերությունը 24.09.2018թ. դրությամբ չունի հարկային որևէ պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ի լրումն «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմց 03.10.2018թ. ներկայացված բողոքի, ցանկանում ենք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 23.09.2018թ. դրությամբ «Դավիթշին» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքը, (այսուհետ նաև՝ Քաղվածք) որի համաձայն՝ Ընկերությունը ունի 312.195 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ, որից 16.280 ՀՀ դրամը հանդիսանում է սոցիալական վճար:

Ընկերություն քաջատեղյակ լինելով վերոնշյալի մասին, շաբաթվա վերջին աշխատանքային օրը՝ 20.09.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի մասնաճյուղում թիվ 6 և թիվ 7 վճարման հանձնարարականների միջոցով թիվ

90005001186 և թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 7000 ՀՀ դրամի և 500 000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր առմամբ 507 000 ՀՀ դրամի:

«Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գինը կազմում է 10.776.000 ՀՀ դրամ, որի 1 տոկոսը հավասար է 107.760 ՀՀ դրամի , իսկ ըստ Կոմիտեի կողմից 01.10.2018թ. տրված թիվ 1703 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը ունի ընդամենը 14.000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն, ինչն էլ պակաս է հայտով ներկայացված գնային առաջարկի 1 տոկոսից և ավել չէ 50.000 ՀՀ դրամից:

Այսպիսով, «Դավիթշին» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող պարտավորություն:

Ցանկանում ենք նշել, որ նմանատիպ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների շուրջ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացվել է 08.10.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/98 որոշումը: Նշված որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

«Դավիթշին» ՍՊԸ-ն բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների կատարման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 28.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով և 1.5 կետով կայացված որոշումները:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Դավիթշին» ՍՊԸ-ի տնօրեն Արարատ Մարկոսյանը և Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով Բողոքներ քննող անձը դիմել է Երևանի քաղաքապետարանին, խնդրելով՝ նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Վաչագան Մեժունցը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/101 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից 03.10.2018թ ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 28.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 23.09.2018թ. դրությամբ Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.10.2018թ. «Դավիթշին» ՍՊԸ-ին 24.09.2018թ. դրությամբ տրված թիվ 1703 տեղեկանքը, Ընկերության կողմից 20.09.2018թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի միջոցով կատարված վճարման հանձնարարականները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.09.2018թ. տրված եզրակացությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Դավիթշին» ՍՊԸ-ն:

«Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 10.776.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 25.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 5-րդ կետով որոշել է՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Դավիթշին» ՍՊԸ-ին:

- 6-րդ կետով որոշել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնկցի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող Հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 26.09.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.09.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Դավիթշին» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ՝ 333.195 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 28.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի՝

- 1.1 ենթակետով արձանագրել է, որ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնկցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ «Դավիթշին» ՍՊԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

- 1.5 ենթակետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Դավիթշին» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 333.195 ՀՀ դրամի չափով և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 32-րդ կետի 20-րդ ենթակետով, 44-րդ կետով և Հրավերի 7.15 կետով, որոշել է «Դավիթշին» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ «Դավիթշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ 20.09.2018թ. Ընկերությունը կատարել է համապատասխանաբար 7000 ՀՀ դրամի և 500.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում՝ ընդհանուր 507.000 ՀՀ դրամի չափով և համոզված լինելով, որ իր կողմից կատարված վճարումներով ամբողջությամբ մարել է հարկային պարտավորությունները, 23.09.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին, սակայն 21.09.2018թ.-ից մինչև 23.09.2018թ. հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր, այդ իսկ պատճառով գումարները գանձապետարանի համապատասխան հաշիվներին մուտք են արվել դրանց հաջորդող առաջին աշխատանաքային օրը՝ 24.09.2018թ. (երկուշաբթի): Արդյունքում, Ընկերության միասնական հարկային հաշվին հայտը ներկայացնելու օրվա՝ 23.09.2018թ., դրությամբ արտացոլվել է 333.195 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորություն: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կողմից 01.10.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 24.09.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գումարը կազմել է 14.000 ՀՀ դրամ, որը առաջացել է դրոշմանիշային վճարի գծով և չի գերազանցել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Ընկերության կողմից 20.09.2018թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հաշվին փոխանցված՝ 7000 ՀՀ դրամի և 500.000 ՀՀ դրամի չափով կատարված փոխանցումների համապատասխանաբար՝ N6 և N7 վճարման հանձնարարականները, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կողմից 01.10.2018թ. «Դավիթշին» ՍՊԸ-ին 24.09.2018թ. դրությամբ տրված թիվ 1703 տեղեկանքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կետրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 10.776.000 ՀՀ դրամ:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.09.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Դավիթշին» ՍՊԸ-ի ընթացակարգին

մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (23.09.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 333.195 ՀՀ դրամ:

- Ընկերության կողմից 20.09.2018թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հաշվին փոխանցվել է ընդհանուր 507.000 ՀՀ դրամի չափով գումար:

- Ընկերության կողմից 20.09.2018թ. կատարված վճարումն արտացոլվել է միայն 24.09.2018թ., քանի որ 21.09.2018թ.-ից մինչև 23.09.2018թ. հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 01.10.2018թ. «Դավիթշին» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 24.09.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գումարը կազմել է 14.000 ՀՀ դրամ, որը առաջացել է դրոշմանիշային վճարի գծով և չի գերազանցում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ 20.09.2018թ. Ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումը, սակայն հարկերի միասնական հաշվին հաշվեգրված միջոցներից հարկային պարտավորությունների մարումը կատարվել է միայն 24.09.2018թ., այսինքն, ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների անբարեխիղճ կատարման արդյունք, հետևաբար, չի կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի շրջանակներում վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից 03.10.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման

աշխատանքների աշխատանքի կատարման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/52 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 28.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով և 1.5 կետով կայացված որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ